



ԻՐԱՎՈՒՆԿ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱՐԹԻ 5 ՄԱՐՏ 1897

ԹԻԻ 10

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ներկայ 1897 տարեկան

Պոչկարիոյ համար տարեկան 10 ֆր
 " " " " 1/2 " 5 "
 Արտասահմանի համար " 12 "
 " " " " 1/2 " 6 "
 Կանխիկ վճարելի

Նամակ դրամ եւայլն խրկել հետեւեալ հասցեով
 ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՎՈՒՆԿԻ ՀՐԱՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ
 „Иравункъ“
 ВАРНА (България).

Rédaction du journal
 „Iravounk“
 VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ոչողեայ գրութիւնք
 ետ չեն դրկուիր եւ յարմար դատ-
 ումէնքն միայն կը հրատարակ-
 ունին ամբողջովին կամ մասամբ:

Շաբաթը մնաց տողը 20 սանթիմ.
 երեքէն աւելի անգամներու համար
 20 աւ 100 զեղ կը լինի:

ՏԵՐՈՒԹԵԱՆՑ ՎԱՐԱՆՈՒՄԸ

Յոյն կառավարութեան պա-
 տասխանը ինն օրէ ի վեր հասած
 է արդէն Եւրոպական դաշինքնե-
 րուն, սակայն մինչեւ այն վայր-
 կեանքը, ուր կը գրեմք այս տուրք,
 հեռագիրը չկրցաւ տակաւին իմա-
 ցնել մեզ թէ աշխարհիկները ինչ
 որոշեցին ընել այն փոքրիկ ազգին
 դէմ, որ կը յանդգնի մերժել
 միացեալ Եւրոպայի պահանջում-
 ները: Անոնց այս դռնդաղ, վա-
 րանոտ գործունէութեան բուն
 պատճառը պէտք է փնտռել ու
 խորին համակրութեան մէջ, զոր
 Յունաստանի արի և հայրենասի-
 րական ընթացքը և իր պաշտպա-
 նած դատին արդարութիւնը ներ-
 չնչեցին Եւրոպայի ամեն ժողո-
 վուրդներուն, գուցէ բացի գեր-
 մանականէն, որոյ կայսրը չգիտ-
 ցաւ չափ ու սահման գնել իր
 թրքասիրութեան:

Եւրոպական կառավարութիւն-
 ներն ու ժողովուրդները այժմ
 պայքարի մը մէջ են իւրարու դէմ.
 ժողովները կուզեն ճշել, իսկ
 ցնել Յունաստանը, իսկ վերջին-
 ները կը ջանան իրենց համար ա-
 մեն տրամադրելի միջոցներով քա-
 ջալերել զայն. և ժողովրդային
 այս բնական ու արդար միտումը
 մտահոգութիւն ու շուարում կը
 պատճառէ դաշինքներուն որոնք կը
 գեղեւին վերջնական որոշում մը
 տուլու և ժամանակ կանցընեն խոր-
 հրդակցութիւններով, բանակցու-
 թիւններով, առաջարկներու և
 հակառաջարկներու քննութեամբ.
 Գիւստաւիները գիշեր ցերեկ դա-
 դար չունին, փոխանակեալ հեռու
 գիւրներուն վերջը չգար, զի կա-
 ռավարութիւններու թրքասիրու-
 թիւնը առաջնորդեց զիրենք ճան-
 բու մը մէջ, ուրկէ ելք մը գտնել
 շատ դժուար դարձաւ իրենց՝ Եւ-
 րոպայի հանրային կարծիքն ընդ-
 դիմութեան պատճառով:

Դանձոթ են արդէն Անգլիոյ,
 Ֆրանսայի և Իտալիոյ ժողովուրդ-
 ներուն կրեւորական դատին նկատ-
 մամբ արտայայտած համակիր
 զգացումները. մինչեւ իսկ Ամե-
 րիկա չուզեց անոնցմէ ետ մնալ և
 իր կամաւորներու խումբերը կը

զրկէ Յունաստան: Սակայն ամե-
 նէն շահեկան և ուրախութիւն պա-
 րագան սա է որ ռուս ժողովուրդն
 ալ իր կառավարութեան հետ հա-
 մախիւ չէ այս խնդրին մէջ: Այս
 մասին շատ հրահանգիչ կը լինի
 մեզ նամակ մը, զոր Սոլէյլ լրա-
 գիրը ստացած է իր Ռէթէրսպու-
 կի ռուս լոգիստիկէն:

Նա կը յայտնէ մէջ որ Ռուսաս-
 տանի ժողովուրդը պարզապէս
 անկարող է ըմբռնել թէ՛ երբ
 չկայ դրեթէ ռուս ընտանիք մը
 որ իր մէկ անդամը զոհ տուած
 չըլլայ թուրքին դէմ մղուած պա-
 տերազմներուն, ինչպէ՛ս ռուս կա-
 ռավարութիւնը այժմ իր սուրբ
 պիտի նուիրէ զայն, դարաւոր
 թշնամին, պաշտպանելու և ընդ-
 հակառակը ճշելու համար այն
 ազգերը որ Ռուսիոյ ցեղակից,
 կրօնակից են և անոր պաշտպա-
 նութիւնը վայելած՝ դարեւ ի վեր:
 Ի զո՛ւր ուրեմն Ռուսիա ցարդ
 արիւն թափած պիտի ըլլայ և այ-
 սուհետեւ պիտի դրժէ՝ իր պատ-
 մական սուրբ կոչման Արեւելքի
 քրիստոնէից փրկութեան մասին:
 Թիւթակիցը կը յայտարարէ թէ
 դժգոհութիւնը ընդհանուր է և
 կարտայայտուի քաղաքներու և
 գիւղերու, ընկերական տարբեր
 շրջանակներու և մինչեւ իսկ գրա-
 քննուած մամուլին մէջ: Միայն
 կղերը դեռ չուզեր արտայայտել
 իր խորին դժգոհութիւնը: Գոհ է
 լոկ ազնուականութեան այն գեր-
 մանասէր մասը, որ կը փափաքի
 Ռուսիան Գերմանիոյ հետեւող տես-
 նել տրտաքին քաղաքականութեան
 մէջ:

Ահա միւլթարական միակ կէտը
 ժողովուրդներու արդարասէր ձայ-
 նը որ կը բարձրանայ Եւրոպայի
 քաղաքական ընդհանուր ապակա-
 նութեան մէջ. սա ոտքի տակ պի-
 տի առնէր բոլոր մարդկութեան
 պատիւը, ինչպէս առաւ հայկա-
 կան կոտորածներուն ժամանակ, ե-
 թէ չլուէր այդ անհղ ձայնը,
 զոր չեն կարող արհամարհել աշ-
 խարհի տիրապետողները և որ պի-
 տի փրկէ ինչպէն թուրքին դար-
 չելի լուծէն, ինչ որ ալ խորհին
 ու որոշեն տէրութիւնները:

Որքան խնդիրը կրեւորէի համար

նպաստաւոր կերպով լուծուի, այն-
 քան աւելի պարտինք բերելի
 Հայերս, զի նոյն չափով պիտի
 մեծնայ մեր այն հաւատքը թէ
 արդարութիւնը ցմիշտ չկրնար խա-
 ջալիկ դառնալ դժուար շահերու
 ձեռքը և թէ հայ ժողովրդի հա-
 մար ալ պիտի ծագի աւելը, քա-
 նի որ բարոյականի օրէնքներուն
 է վերջին խօսքը ազգերու ճակա-
 տագիրը վճռելու խնդրին մէջ:

ԿԱԹՈՂԻԿՈՍՍԿԱՆ ԱՅԾԵԼՈՒ ՀՈՎԻԻԸ

Գեր. Արսէն վարդ. Վեհունի չա-
 բաթ օրը Պուրկապէ վերադարձաւ
 վառնա և արդէն երկիցս քարոզ
 խօսնցաւ ժողովրդին: Նա առաջին
 քարոզին մէջ բացատրելով համե-
 րաչի դործունէութեան օգուտները,
 յորդորեց ժողովուրդը սիրոյ և
 միաբանութեան. իսկ երկրորդ քա-
 րոզով մատնանի ըրաւ վառնայի
 ազգ. գործերու վիճակին ցաւալի
 կողմերը և դառնապէս դանդաղե-
 ցաւ ժողովրդի ցոյց տուած ան-
 տարբերութեան մասին՝ հանդէպ
 այդ վիճակին:

Ն. Գերապատուութիւնը անա-
 չառ լեզուով մը դատաւարտեց
 մանաւորապէս այն դատակարգերը,
 որոց վրայ մեծագոյն պարտախա-
 նութիւն մը կը ծանրանայ հոգ և
 խնամք տանելու եկեղեցական և
 դպրոցական գործերու բարուք ըն-
 թացքին:

Յուսալի է որ վեհափառ Հայ-
 րիկի ներկայացուցիչին խիստ, սա-
 կայն իրաւացի դիտողութիւններն
 ու ազգօգուտ յորդորները ապար-
 գիւն և անհետ չպիտի կորսուին մեր
 քաղաքին տեղական-ազգային գոր-
 ծերուն համար:

« Խ Ո Ւ Չ Ա Կ »

Մարտի օկիդրէն վառնայի մէջ
 հրատարակուի սկսաւ վերջգրը-
 եալ անունով հանդէս մը, որոյ նը-
 պատակն է՝ ըստ իր յայտարարու-
 թեան՝ «Ընդգրկել ազգային ամեն
 խնդիր – ընտանեկան, տնտեսական,
 կրթական, գրական, լեզուական,
 վարչական, բարոյական, կրօնա-

կան, իմաստասիրական եւն. . .
 և հետեւի ընդհանուր մարդկու-
 թեան առած նշանաւոր բայերուն և
 մասնաւորապէս ընկերավարութեան
 գիտական սկզբունքներուն և ուղ-
 ղութեանը:»

Այս բաւական ընդարձակ նպա-
 տակը, որոյ գործադրութիւնը խըմ-
 բագրական նշանաւոր ոյժերու կի-
 բառութեան կը կարօտի, անպայ-
 ման պիտի ստանար մեր կատար-
 եալ համակրութիւնը, եթէ «Խու-
 զակ»-ի ծրագրին մէջ ներմուծուած
 չըլլար ընկերավարական սկզբունք-
 ներու հետեւողութիւնը, որ մեր
 կարծիքով հայ ազգին այժմեան
 պէտքերուն համապատասխան ուղ-
 ղութիւն մը չէ բնաւ: Առ այժմ
 այսպիսի:

Նորածին հանդէսը, որոյ պա-
 տասխանատուն է Տ. Նիքօլա Տրա-
 կուլէֆ, կիսամսեայ է և կը բաղ-
 կանայ ութ էջէ՝ գրեթէ «Հնչակ»
 թերթին ծաւալով: Տարեկան բաժ-
 նորդագրութիւնն է Պուրկապէ
 համար 10, իսկ արտասահմանի
 համար 12 ֆր. հատով կը ծախուի
 40 սանթիմի:

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

ՄՐԵՄՈՒՆՉՔ ՀԱՅԿԱԿԱՆ

Երկար տարիներէ ի վեր ազգ-
 ապրտ կրգերու տպագրութիւնը
 արգելուած ու հրգարանները սպա-
 ռած ըլլալով, անհրաժեշտ պէտք
 մը դարձած էր նոր երգարանի մը
 հրատարակութիւնը. այս պէտքը լի-
 ցնելու իղձով այժմ ձեռնարկուած
 է ազգային ընտիր երգերու հաւա-
 քածոյի մը պատրաստութեան Նոր
 Երգարան կամ Մրմունքը Հայկա-
 կանք անուան տակ:

Սոյն Երգարանը որ կը բաղկա-
 նայ առաւել քան 100 երեսէ, կը
 պարունակէ շատ մը հին և նոր ա-
 դատ երգեր, զորս այժմ ժողովուրդն
 ախորժանօք կ'երգէ: Գործը դեռ
 մամլոյ տակ է. բայց փափաքողք
 պիտի կրնան զայն ստանալ ի մօտոյ,
 փոխարէնը 1 ֆրանգ խրկելով խըմ-
 բագրութեանս:

Աղգ. վարժարանաց համար՝ երբ
 դէթ 10 հատ կ'ուզուի, 20 աւ 100
 զեղ կը լինի:

ԲՆԿԵԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

ԱԿԱՆԱՏԵՍԻՍԸ

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

(Շար. նախ. քիշեմ. եւ վերջ)

Այս ժամանակ Ռապատ կը հասնին Բինկեանը պաշտպանելու համար Երզնկայէն զրկուած ութսունի չափ հեծելազօրք, որոց կընկերանար Կասմաքի Երեսուֆ միւլադիմը և որոնք իրօք կը պաշտպանեն հայ կանանց բազմութիւնը. ամեն տեսակ բռնութիւնները կը դադարին. Զինուորներու հարիւրապետը կանանց կ'իմացնէ թէ ա'լ աղատ են երթալ ուր որ ուզեն. Զմուռնիք ըսել որ անոնք երեք օր դրեթէ անօթի մնացած էին, վասն զի Ռապատցիք շան առջեւ ուտելիք նետելու պէս՝ խաճիկի գաւթին մէջ հացի կտորտուքներ միայն կը նետէին որ կիներն ուտեն. Բինկեանի երկու հարիւր տուններէն միայն ութը ազատ մնացին հրդեհէն. Ռապատէն դարձող կիները կուգան կը լեցուն ալիք ութ տուններուն մէջ. նոյնպէս գիւղ կուգան լեռ ու ձոր ապաստանած երիտասարդ, ծեր և կին. Միւլադիմը կառավարական ամբարէն 25 քիւէ ցորեն կը բաշխէ Բինկեանի ժողովրդին, որուն գիւղ մտած օրը քեամիլ իր մարդերով կը մեկնի. նա անկէ ետք կոտորելու պաշտօնով զրկուեցաւ Խուռնավիլ գիւղը, որոյ բնակիչները Բինկեանցիներու գլխէն անցած փորձանքէն խրատուած՝ զգուշութեան միջոցներ ձեռք առին. իրենց գիւղը չի մնացին, այլ լեռներուն մէջ ցրուելով, քիչ շատ պաշտպանողական դիրքեր բռնեցին, որով ազատ մնացին կոտորածէ:

Երեսուֆ միւլադիմի ընկերացող զինուորները իրենց եկած օրէն մինչեւ այսօր կը բնակին Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ, զոր ախոռի վերածած են և սեղանը քանդած. իրենց պաշտօնն է Բինկեանցիները պաշտպանել... Ս. Երեց մանկանց եկեղեցին ալ քանդուած է: Մէկ խօսքով Բինկեան այսօր աւերակ ու քարակոյտ մ'է դարձած. և եթէ օտար մը հոն մտնէ, միայն վերի Մեծատուրեաններու ընդարձակ ու հոյակապ տունէն, որ կրակէն չջնասուած ութ տուններէն մէկն է, պիտի կրնայ գուշակել Բինկեանի նախկին, նիւթապէս այնքան նախանձելի վիճակը:

Բինկեանցիները այժմ մեծ մասամբ կ'ապրին ուտելով այն խանձած ցորենը զոր հողի և քարի ներքեւ փնտռելով կը հանեն. Եթէ այսպէս երթայ, ժողովուրդը անթութութենէ պիտի մեռնի. Թէեւ միսիօնարները 50 ոսկի և Սըվազ բնակող Բինկեանցիները 125 կտոր ճերմակեղէն զրկեցին, սակայն այս օգնութիւնը կաթիլ մը ջուր է, իսկ ժողովրդին կարօտութիւնը

ծովի ընդարձակութիւնն ունի. Մինչեւ այսօր հինգ մարդ մեռաւ անօթութենէ, և եթէ վերոյիշեալ 50 ոսկին չգար, աւելի շատ պիտի ըլլար մեռնողներուն թիւը վերջին երկու ամիսներուն մէջ: Ա'խ, ո՞վ պիտի համար օգնութեան...

Բինկեանի Հայոց թիւն էր 1160. ասոնցմէ 58 սպաննուած է, 2 հոգի վիրաւորուած ու կոտորածէն ետք մեռած, 5 ալ անօթութենէ մեռած են: Իսկ 45 մարդ վերջին կոտորածէն առաջ տարուան մը միջոցին մէջ սպաննուած կամ ուրիշ կերպով կորսուած են. գուժ մար' 110: 300 մարդ զաղթած ու գնացած են Զինէքէր, Կէտէնիկ, Տիվրիկ և Սըվազ, ուրեմն Բինկեանի մէջ մնացած են հիմա 750 հոգի:

Նիւթական ֆեսան է 150,000 օսմ. ոսկի:

Բինկեանցի մը

... 24 Նոյ. 1896

ԹՂԹԱԿՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս 20 Յունիս.

Հայերը վարմանալի ժողովուրդ են. իրենց բարքեր ու ձիւքեր յաճախ կընծայեն այնպիսի հակապատկերներ, զորս սովորական ուղիղի դործ չէ հոգեբանօրէն վերլուծել ու իրարու հետ հաշտեցնել:

Թուրքիոյ Հայերուն մէջ տիրող թշուառութիւնը գրգիռ մ'եղաւ մեր մէջ թուրքեան և պարտաճանաչութեան զգացումին զարթման: Բաց ի այն թթասիրական գործերէն, զորս հանրային թերթերը կը հրատարակեն, թաղերու մէջ հայ ժողովուրդը իրարու օգնութեան կը հասնի՝ իւրաքանչիւրը իր կըրքած չափով և կերպով. լուկ, մնջիկ ու անտես՝ խոնարհ յարկերու խորշերը կը կատարուին աշակցութեան սրտայոյզ դէպքեր. գաւառներէն ալ համերաշխական ոգի արտայայտող այսպիսի լուրեր կուգան. եկ տես որ այս գեղեցիկ տեսարանին հակապատկերներն ալ չլլացան մեզ մեր բարքեր: Ընդհանրապէս նպաստի բաշխումներուն մէջ զեղծումներ, անկարգութիւններ և ատոնց հետեւանքով խռովութիւններ անպակաս են: Խօսքս մասնաւոր, փոքրաթիւ խարդախութեանց վրայ չէ. նուիրատուն խարդախողներ, ստորագրութիւններ կեղծողներ բազմաթիւ են այստեղ: Թողունք ատոնք մէկ կողմ: Պօլսոյ ամենէն խղճալի գիւղին, Խասգիւղի նպաստի գործին մէջ կատարուած զեղծութիւններն զէմ գանգատ և բողբ արդէն այնքան շատցած են որ Պատրիարքարանը պիտի ստիպուի միջամտել և քննութիւն մը կատարել: Եգիպտոսի դաղթականներուն մէջ դժգոհութիւնը հետազնտէ կընդհանրայնապատի

բաշխման ձեւին դէմ. ասկէ կը ծագին խռովութիւն և կռիւ: Պուլկարիոյ մէկ քանի քաղաքներէ գրուած նամակներ նոյն ցաւալի պատկերը կը դնեն. լսեցի թէ Պատրիարքարանին ալ այս մասին բողբներ եկած են: Կըրնայի դեռ ուրիշ տեղեր յիշել, սակայն քանի մը օրինակներ բաւ են հաստատելու թէ իրարու հակասող երեոյթներ շատ յաճախ են մեր բարքերուն մէջ: Ուրիշ կարգի փաստ մ'ալ: Որքան միսթարական ու յուսադրական է տեսնել որ կոտորածէ և հրդեհէ ամենէն աւելի ֆեսանուած քաղաքներ ամեն զոհողութիւն ու ջանք կընեն իրենց աւերակներու վրայ վերականգնելու: Հաստատութիւններ, նոյնքան ապշեցուցիչ են և զայլոյթ կը պատճառեն այն քաղաքներ, որոց հայ ժողովուրդը տիրացուական ջնջին խնդիրներով և եսական կռիւներով կը զբաղի այնպիսի ժամանակ մը ուր ընդհանուր ազգը իր սուգին մէջ ամփոփուելով, իր ոյժերը հասնեցնէր ոգւով միացնելու անհրաժեշտ պէտք ունի: Կը կրկնեմ, զարմանալի ժողովուրդ մը ենք մենք:

Արդէն գրած եմ ձեզ թէ Պատրիարքարանը իր քաղաքական նշանակութիւնը կորսնցուցած ու միայն սովորական ընթացիկ դործեր վարելու դատապարտուած է. սակայն այս համեստ չըջանակին մէջ ալ յաջողուլ յոյսերը երթալով կը նուազին Պատրիարքին համար, որովհետեւ ամեն գործ ու կարգադրութիւն կը բաղխի երկու մեծ դժուարութեանց այստեղ և գաւառներուն մէջ, այն է դրամի չգոյութեան և կառավարական շրջանակներու մէջ՝ Հայերուն համար բարի կամեցողութեան սքօղեալ պակասութեան: Առաջնորդական թափուր ամփոփուելու մէկ մասին համար Պատրիարքարանը տեղապահներ նշանակեց, որոնք սակայն կը մտածեն թէ ի'նչ պիտի երթան ընելու այն տեղեր, ուր ժողովրդին ամենէն մեծ պէտքը հացն է և առանց այդ պէտքը հագուլու բուսական գումարի մը, իրենց ուրիշ ու է գործունէութիւնը ամփոփեան պիտի դատապարտուի: Քանի որ տնտեսական վիճակը բարւոքած չէ, և մանաւանդ Հայոց վիճակը երկրին բոլոր տարրերուն մէջ յուսեցնէ, ազգ. գործերու վիճակին համար ի'նչ բարւոքում կարելի է սպասել: Պատրիարքը այնպէս կը շարժի, որ կարծես թէ չտեսներ կացութեան այս դժուարութիւնը, կամ գոնէ, չտեսնել կը ձեւացնէ. այս կը հետեւի իր հրամաններէն և հրահանգներէն զոր կը զրկէ գաւառներուն և որոց գործադրութիւնը կուշտ ժողովրդի մը վարչութեան գործն է:

Այստեղ ընդհանուրին ուշադրութիւնը սեւեռած է կրետական խնդրոյն վրայ. յունա-թրքական պատերազմի մը հաւանականութիւն

նը մեծ երկիւղ կը ներշնչէ Պոլսոյ բնակիչներուն, որոնք մոռցած չեն օգոստոսի ջարդերը: Սակայն իրազեկ քանի մը անձեր, որոց հետ տեսնուելու առիթ ունեցայ՝ այն կարծիքն ունին թէ Դուռը արդէն կրեանէ կորուսած կը համարի և ամեն դիւանագիտական ջանքեր կ'ընէ պատերազմէ խոյս տալու համար և թէ իր պատերազմական պատրաստութիւնները ձեւական են լուկ. նոյն անձեր ջարդերուն կըրկնուելը բողբովին անհաւանական կը համարին, որովհետեւ կառավարութիւնը նկատի ունենալով տէրութեանց այժմեան դիրքը՝ իրեն համար շատ վտանգաւոր կը նկատէ ջարդերու կրկնութիւնը ու նոր խռովութիւններ:

Կալսաց 24 փետր.

Դուռն ու Պատրիարքարանը աչք կապուկ կը խաղան: Մինչդեռ Ս. Օրմանեան աւետարեւ շրջաբերականներով կը ծանուցանէ ազգին թէ կայս. իրատեով՝ անկարող Հայերը երկու տարի զերծ պիտի մնան զինուորական տուրքէ և չպիտի վճարեն յետամնաց հարկերը, անգին, գաւառներու մէջ, ամենայն խստութեամբ կը պահանջուին ու կարելիութեան սահմանին մէջ կը գանձուին ատոնք:

Հայաստանէ հասած նամակներ կը հաստատեն զայս: Ի՞նչքէ կէն փետր. 8 թուականով գրուած նամակ մը տուրքի հաւաքման վրայ խօսելով կըսէ.

«Վերջապէս կարգը մեզի եկաւ. առաւօտ մը դատաւորը, դատախազը և մի քանի տաճիկ ու հայ պաշտօնեաներ մտան մեր տունը. կէս ժամ գրեցին մեր հօրը ստացուածք ու հեռացան 10 ոսկւոյ պահանջաթուղթ մը յանձնելով ինձ. բացի այդ գումարէն նոյն չափ մ'եւս կը պահանջուի մեզմէ հին և նոր տուրքի համար. պայմանաժամը այս օրեր կը լինայ, չեմ գիտեր ընելիքս. պիտի բանտարկեն զիս. այդ յայտնի է. անկէ զատ բան մը չեմ կարող գուշակել, ինձ պէս շատեր կան. հայերը մեռցուցին և անոնց թողած տուրքի պարտքին կրկինը կը պահանջեն այժմ անոնց անփորձ գաւառներէն: Շարժական ինչքերը կողոպտեցին և հիմայ անշարժ կալուածներ կ'արձանագրեն և 8-10 մէճիտիլէ կը պահանջեն իր արձանագրութեան տուրք: Ի՞նչքէ կցինք տնով տեղով կը փոխադրուին. ծովեղերեայ քաղաքներ, իղմիր, Մէրսին ևն. դատարկացաւ գեղը. մնացողներն ալ իրենց աղքատութեան պատճառաւ չեն կարող վճարել իրենցմէ պահանջուած գումար և հետզհետէ կը փոխադրուին բանտերու խորշերը. յաջորդ նամակը բանտէն պիտի գրեմ. ինչ որ ալ պատահի ինձ, չպիտի դժգոհեմ երբէք:»

Գալով այն շնորհին որով բռնի

խաղաղապետները իբր թէ պիտի
կրնան իրենց նախկին կրօնին վե-
րադառնալ, յարոնի է թէ պար-
զապէս անկարելի է որ իսլամա-
ցած Հայեր օգոստին այդ շնորհէն
ով որ քրիստոնէի և մանաւանդ
գաւառներու մէջ ապրած է, զիտէ
զայդ: Միայն վանի մէջ Լուսա-
ւորչական եկեղեցին վերադառնա-
լու համար քանի մը Հայերու եղած
թողտուութիւնը եւրոպացիներու
աչքին փաշի քանիւ համար է և հե-
տեւորար նշանակութիւն չունի
բնաւ:

ԻՆՆԵՐՈՐԴ ԽԱՅՍԻՐՈՒԹԻՒՆ

Արմենի լրագրին մէջ կը կար-
գանք այս վերնագրով յօդուած մը
որմէ կը քաշենք հետեւեալ տեղե-
կութիւնները:

Քաջ և Լիւմբուսի քրանսացի
մը, Տ. Էմիլ Միթման, Պրուսիոյ
մէջ հրատարակեց Հայաստանի
լարդերը խորագրով գիրք մը,
ուր հեղինակը սրտաբորբով լեզուով
մը վերջին տարիներու թրքական
զաւարթութիւնները կը պատմէ և
կը յայտնէ թէ Հայաստանի Լար-
դերուն վրայ լայն առաւել
գիրքը կարգաւէ Խոք քրանսացի
և պէկիացի կաթողիկ երիտասարդ-
ներ մէկ մէկ խումբ կազմեր են՝ ար-
շաւանք մը պատրաստելու նպա-
տակով Թուրքիոյ դէմ և ի նպաստ
Հայերուն և Կիլիկացիներուն: Բա-
րիկի խումբը այնպիսի գոտարու-
թեանց հանգիստի է, որոց մը
սին Տ. Էմիլ Միթման կուգէ լը-
ուութիւն պահել: Նա Օդոստոսի
մէջ առանձին կերթայ Թուրքիա,
երկրին ու անոր ժողովուրդներուն
վրայ հարկաւոր ծանօթութիւններն
ստանալու համար: Գեկտեմբերի
մէջ կը վերադառնայ Եւրոպա և
կ'իմանայ Պրուսիոյ խումբին կազ-
մութիւնը: Երկու խումբերն կը
բանակցին և կը միանան իրարու
հետ: Հեղինակը կը յայտարարէ
թէ այժմ կազմակերպութիւնը կա-
թողիկներու մէջ այնքան յարգու-
ման, որ կրնայ փոքր արշաւանքի
մը ձեռնարկել: Հեղինակը հրաւեր
կը կարգայ ամեն անոնց, որոնք կ'ա-
տեն Թուրքիա, մասնակցելու ար-
շաւանքին և կըսէ:

— Եթէ այս հրաւերը լսելի ըլլայ
և իտալացիներ, Անգլիացիներ,
Գերմանացիներ, Յունացիներ,
Պէկիացիներ ու Սլաւոնացիներ
մեզ հետ միանան, ո՞ր եւրոպական
աղբը պիտի համարձակի միջամե-
արշաւանքի մը դէմ, ուր իր աղ-
բակիցները պիտի գտնուին:

Արշաւանքին մասնակցելի փա-
վաքողը պարտի անմիջապէս իր
փափաքը իմացնել ապահովագր-
եալ նամակով մը առ M. Godfroy,
111, rue des „Yoyeuses Entrées“,
à Louvain (Belgique). Նամակա-
գիրը պարտի հաղորդել նաեւ իր
հասցեն, տարիքը, զբաղումը և ա-

մեն ինչ որ կրնայ նպաստել իրեն ըն-
դունելութեան արշաւանքի Յանձ-
նախմբէն:

ԻՆՊԱՍՏ ԱՐԵՒԵԼՔԻ
ԱՐԿԱՍՏԵԼՈՑ

Բարիկի Բաթրի լրագրին մէջ
կը կարգանք հետեւեալ կոչը, զոր
ստորագրած են զբաղէտ, երես-
փոխան, հրապարակագիր և ու-
սուցչապետ դասակարգերուն պատ-
կանող քան և ութ անձեր որոց
մէջ նշանակելի են Լ. Պօլիէօ,
Ռէնաք, Տ. Գօշէն, Յ. Գօրէ:
Կ. Տէշան, Լաֆիթ, Ա. Վանտալ,
է. տը Վօկէ և ուրիշներ:

«Արեւելքի նորագոյն դէպքերը
ստակալի թշուառութիւններ ծնան:
Քրիստոնէայ ժողովուրդներ կոտո-
րածի, կողպուտի և հրդեհի մատ-
նուցան և իրենց բնակավայրերէն
արտաքսուելով ստիպուեցան ամե-
նախնայ վիճակի մը մէջ օտար եր-
կիրներ դիմել իրենց կենսով ու
զանազանքով:

Պոստայ և փոքր Ասիոյ Լարդերը,
Կրեմէի խոզովութիւնները հաղա-
բաւոր ընտանիքներ առանց ապ-
րուստի ձգեցին:

Այսպիսի աղետներ մեր վրայ
ստիպողական պարտականութիւն
ներ կը դնեն:

Քանի մը անձեր խորհեցան թէ
հարկադրիչ պարտք մ'էր իրենց
համար, այս թշուառութեանց ա-
մսքման նպաստել առանց և և է
քաղաքական կամ կրօնական դի-
տումներու: Նոքա հիմնեցին Արե-
ւելքի դէպքերուն զոհերուն նպաս-
տամատոյց յանձնախումբ մը և
ձեզ նրախտապարտ պիտի մնան
ընդունելով ձեր նուէրը ի նպաստ
այս մարդասիրական գործին:

Այն ժողովուրդներուն, որոց հետ
կապուած ենք հին և խորին հա-
մակութեան կապով մը, ապա-
ցուցանենք թէ կողբանք զիրենք
իրենց փորձութեանց պատճառով և
կը ջանանք իրենց ցուելը ունեւե-
լու մեր կարողութեան չափով:

— Նուէրները պիտի զրկուին Քօն-
ստանթուլի Լաքոնիքի և իր ճիւղերուն
որ պիտի ընդունին զանոնք յանձ-
նախմբին գանձապետ Տ. տ'էշ-
թալի հաշտոյն համար:

ՊԱՊԸ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ
ԽՆԴԻՐԸ

«Սթանտարտ» կ'իմացնէ թէ
Պապը Արեւելքի գործերուն ներկայ
վիճակին վրայ Քրանսական և ա-
ւստրիական դեսպաններէն մանրա-
ման տեղեկութիւններ առնելէ ետք՝
Աւստրիոյ կայսրը նամակ մը դը-
րեր է զայն համոզելու համար որ
վճռապէս ձեռք առնէ և առաջ տա-
նի իր նախահայրերուն՝ Թուրքե-
րուն դէմ սկսած գործը:

Լեւոն Ժ. Գ. այս խորհուրդը յա-
ճախ տուած է Ֆրանց Եօզէֆ
կայսր պնդելով թէ կաթողիկոս-
թիւնը մեծ տէրութեան մը աշակ-
ցութեան յենով կրնայ Արեւելքի
վերածնութիւնը պատրաստել և
զայն օժտել քաղաքակրթութեամբ
ու բարգաւաճմամբ:

ՀԱՅՐ ՍԱԼՎԱԹՈՐԻ
ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Երկու մեծ տէրութիւններ, Ֆը-
րանսա և Իտալիա, մէկ ու կէս տա-
րի իրենց բոլոր ազդեցութիւնը
գործադրեցին Հայր Սալվաթորի
սպանիչ Մազար պէյը պատժել
տալու համար: Թուրք կառավա-
րութիւնը գործադրելէ յետոյ այն
խաբէտական ձգձգող եղանակները,
որ իր մասնագիտութիւնը կը կազ-
մեն, հարկ տեսաւ յիշեալ տէրու-
թեանց քիչ շատ առերեւոյթ գո-
հացում մը տալ և Մազար պէյ
գատապարտուեցաւ բերդաբլու-
թեան, որ այս պարագային մէջ,
ինչպէս թուրք կառավարութեան
գործերուն իրադիկ անձինք կը
հասկնան, գրեթէ կը նշանակէ
անպարտ արձակում: Սակայն կե-
րեւի թէ Ֆրանսա և Իտալիա առ-
այժմ այսքանով գոհ պիտի ըլլան,
Ահա այս սպանութեան պատ-
մութիւնը կ'ընէ հետաքրքրական
գրքոյկ մը, որ հրատարակուեցաւ
Ի Բարիկ Հայր Սալվաթորի իսլա-
մաքիւնը վերնագրով և որոյ մէկ
օրինակը շնորհակալութեամբ ստա-
ցանք: Զէյթունի հերոսներէն մին
Տ. Աղասի իբր իր վկայութիւնը
զբաժնէ այդ գրքոյկը, զոր Ֆրան-
սերէնի թարգմանած է Տ. Արշակ
Զօպանեան և զոր ուսուցիչ Տ. Բ.
Գիյառ նախաբանով մը կը յանձ-
նորարէ Քրանսացի հասարակու-
թեան ընթերցման:

ՀԱՅ-ՊՈՒԼԿԱՐԵՐԵՆ
ԳՈՐԾԱՆԱԿԱՆ ՔՆՐԱՆԱԳՆԻԹԻՒՆ

Այն գործը, որոյ երեք պրակ-
ները հրատարակուած են արգէն,
կոչուած է զղալի պէտք մը լիցնե-
լու, որովհետեւ Պուլկարիոյ բնիկ և
այն գաղթական Հայերուն համար,
որոնք երկրին լեզուն սովորել կը
փափաքին, ցարգ կը պակսէր
Հայ-Պուլկարիէն դասագիրք մը:
Յուսալի է ուրեմն որ հայ հասա-
րակութիւնը լաւ ընդունելութիւն
մը պիտի ընէ այս իր տեսակին
մէջ անդրանիկ հրատարակութեան,
ուր լեզուն գլխաւոր կանոն-
ները բացատրուած են ամփոփ ու-
ճով և գործնական առատ հրա-
հանգներ պիտի ծառայեն զանոնք
սպաւորելու ուսանողին յիշողու-
թեան մէջ:

Գիրքը պիտի բաղկանայ 15-16
պրակէ կամ մօտ 250 էջէ: Բաժ-
նորդագրութիւնը 4 էջ է կանխիկ

վճարելի: Գիրքը իրենց հասցէին
առանձին ստանալ փափաքողները
պարտին վճարել նաեւ 50 օական
սանդիւփ փօստի ծախք, որմէ աղատ
պիտի ըլլան անոնք որ երկու օրի-
նակի համար կը բաժնորդագրուին:
Բաժնորդագրութեան համար
դիմել Տ. Թադէոր Գ. Հինալեանի,
թղթավաճառ Ի Փ. Պօլիս:

ԻԽԹԱՐԸ ՍԱԽՍՈՒՍ

1896 սէնթեմբեր ամիսէն ինչպէս
էլան պօճլարընը էօտէմէմիչ օլան
պիք դաշ զէվաթ պու կիւնէ գա-
տար կազէթամըզը դապուլ իթ-
մէքտէ իսէլէրտէ պու նուսխէտէն
մատատ՝ զսորը անլարա կազէթա
կէօնտէրմէյէճէկիմիլի պէյանիէ,
պու սօն տէֆա օլարագ պօճլա-
րընը էօտէմէլէրինի գաթիէն իւ-
թար իտէրիզ:

ՎԱՐՆԱՏԱ
ՄԷՔԹԵՊ ԻՆՇՍԱԹԸ

Կազէթամըզըն 9 ընէր նօմէրօսընտա
վարնանըն թաղային համագումար ժա-
ղովըն դարարընը տէրճ իթմիչ իտիք:
օդույանլարմըզա մալիւմ օլարըզ իւզ-
րէ, մէքթիւր իճթիմատա չօճուզ վէ
զըզ մէքթէպի եարմագ իչիւն 30,000
ֆրանգ՝ եանի 1,500 նաթօլէտն սարֆ
իտիլմէսի թանթը դարարա ալընմը
վէ օլ մէպլաղըն 700 նաթօլէտն հա-
ղըր պուլընարագ, գալան 800 նաթօ-
լէտնըն թէաարիքի իչիւն պիք իանէ
գօմիսիօնը ինթիլապ իտիլմիչ աիր:
Պատ. Թաղ. Խորհուրդըն պու թէ-
չէպպիւսի կազէթամըզա տէրճ իթաի-
կիմիլիտէ, միւթալէթմըզը տախի
պէյան իթմէյէ մէճպուլիլէթ հասըլ
օլմը տըր:

Պիզ չու թէչէպպիւսի թաալիպ իտէ-
մէլիպ, գիրա 700 նաթօլէտն նաղըր
վէ թօրլանընտա իանէթի եանի պիւ-
թիւն գուվլիլի մէվճուտէի մալիլմիլիզի,
տէօրտ սուվարտան մամուլ մէքթէպ
պիւնսընտա սարֆ իտիլմէսիտէ՝ պիք
մուհալէնաթ կէօրէմէյօրըզ: Պիք սէնէ
էվլիլ մէքթէպիմիլի եանմաղտան՝ մէք-
թէպիւն տախիլի հալի պու կիւնքի կի-
պի մուհիպի թէչէսիլի օլարըզը ու-
նութմամալըզը՝ տէմէթ իտիլմիլի թի
մէքթէպիւն գուրթ տուարըրը չօճուզ-
լարմըզը թալիմ ու թէրպիլի իտէմէլ-
լէր, իլլա օրատա մուզթէտիլ մէ-
մուրլարըն պուլընմար լաղըմ կէլիլ,
պու տա պալընտա մէքթէպիւն իտարէի
մալիլմիլիտէ միւթէվաղըթ տըր, եանի
պիւտէնիւն լարիտաթը թանթը թէ-
միլիտէ ալմագլէ օլարպիլիլ:

Պու թէմիլնաթը էլտէ իտէպիլմէթ
իչիւն թաղական էֆէնտիլէրին սէպաթ
վէ արգոււր իգթիգա տըր: մէմուլի-
միլիտէ պիւնտէն թաղականլարտա պու
արգու մէվճուտ օլմալը տըր: Օլ հալտէ
մէյտանտա պալըզա միւշթիլաթ մէվաղ-
զիլա չէհրիմիլիէն էն կիւզէլ մէվաղ-
լընտա պուլընտան միլլէթին արտալարը
իւզէրինէ 25,000 ֆրանգ սարֆ օլընըր
իսէ, սէնէվի 5,000 ֆրանգա եազըն
իճար կէթիլիէն միւլլէր մէյտանա
չըզաճագ տըր: իչիլէ պու միւլլէրլէ
մէքթէպիլիլի պիւտէնի թանթը թէ-
միլիտէ ալընապիլիէճէթ տիլ: Մէքթէպիւն
իւշտըր իչիւն դարարկիլ օլան 30,000
ֆրանգ իւզէրինէ իտիլմէն 20—25000

